# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
**13 մարտի 2017 թվականի N40-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-Ի N52-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2016 թվականի հունիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի, Գորիսի, Սիսիանի և Մեղրիի տարածաշրջաններում տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի համաձայն ձևավորված համակարգող խորհուրդների անհատական կազմերը և աշխատակարգերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2012 թվականի դեկտեմբերի 6-ի N17-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N52-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշմամբ հաստատված N2 հավելվածում «8. Շադունց Ներսես – Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ» բառերը փոխարինել «8. Ասրյան Աշոտ - Մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ» բառերով:

2. Որոշմամբ հաստատված N3 հավելվածում «9. Թանգյան Սամվել» բառերը փոխարինել «9. Խաչատրյան Գագիկ» բառերով:

3. Որոշմամբ հաստատված N4 հավելվածում «7. Հովհաննիսյան Միշա - Մարզպետի խորհրդական» բառերը փոխարինել «7. Դավթյան Սաքո - Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ» բառերով:

/ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

2017թ. մարտի 13
ք. Կապան